

տաք ու սապոնոտ մոխրաջրի մէջ կը ձգեն, որպէս զի ձէթով ու զմեռնիտի փոշւով և փայլելու ատեն իրենցմէ ելած պողպատի մասուկներով վրանին կապած աղտեղութիւնը մաքրուի. ետքը ցորենի թեփով լեցուն քառակուսի ամանի մը մէջ կը դնեն՝ որ հորիզոնական դրքով գաւազանի մը ծայր հաստատուած է, և լծակով մը կը դարձնեն. թեփը շատ հեղ կը փոխեն, և ետքը ասեղները այս խարբալէն հանելով կը սկսին կոտրտածներն ու անկատարները աղէկներէն զատել: Արոնց որ ծայրը կոտրած է՝ գործաւոր մը կ'առնու ու յեսանի վրայ նորէն կը սրէ, ետքը ամէն ալ եղոտ չուխայով մը սըրբելով՝ մէկը աջ ձեռքին ցուցամատին վրայ չուխայէ մատնոց մը կ'անցընէ և քանի մը ասեղ մէկէն առած ծայրերը անոր վրայ կը խոթէ, ասով որոնց որ ծայրը դէպ'ի այն կողմը դարձած է վերան խրուելով մէկալներէն կը զատուին: Այս ամէն բանէն վերջը ասեղները քսանըհինգ քսանըհինգ՝ թղթերու մէջ բաժնելով ծախելու կը հանեն:

Իսկ գնտասեղ շինելուն վրայ Ռազմավիս երրորդ տարուան հատորին մէջ խօսուած է, տես հոն՝:

ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ԲՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Ս'ըջնաութ:

Ս'ըջնաութիւն քանի որ միջատի վիճակի մէջ է վեցոտանի որդ մ'է, նեպուկի՝ չափ, մթնկէկ աղտոտ դոյն մը ունի սև կէտերով խայտաբղէտ: Այլու իր տափակ է, ու ճիւղ խօսելով բերան չունի. ուտելու գործեաց տեղը կը լեցնեն երկու եղջիւրներուն ծայրերը՝ որ ճանկի ձևով են: Այս զէնքը ամենահարկաւոր է իրեն իւր որսը ձեռք բերելու համար. վասն զի մարմնոյն կո-

րութեան պատճառաւ ետ ետ քալելու ստիպուած է որով չկրնար անոր ետեւէն հասնիլ: Այս իրեն կարգէ դուրս կազմուածքը որ առջի բերան տեսնողին պակսութիւն մը կ'երևնայ, միջմառի ծին գլխաւոր յատկութիւններէն մէկն է: Այնպէս և իրեն ցեղակից կենդանեաց դիւրաշարժութիւնը չունի, բայց իր որսը ձեռքէն չխալըսիր. ճարտարութիւնը և հնարքը իրեն մէկ հատիկ օգնականներն են. իր կերակուրը միշտ անպակաս է:

Ս'ըջնաութիւն իւր բնակութիւն դիտելով կ'ընտրէ, աւելի աւազուտ ու չոր տեղուանք կը սիրէ, և ընդհանրապէս ծառի մը արմատ կ'ընտրէ որ խոռոչ կամ կամարաձև ծակ ունենայ, կամ թէ արեւու դիմաց հինցած պատի մը տակ: Ռոյնը ձագարի՝ կը նմանի, և այնչափ աւելի խոր կ'ընէ որչափ որ աւելի ուժ ունի, վասն զի պատրաստելու մեծ աշխատանք կ'ուզէ: Ախի շրջանակը կը սկսի գծել. մարմինը ամբողջ հողուն մէջ ծածկուած արօրի պաշտօն կը կատարէ, ու բոլորակաձև կը փորէ գետինը. ետքը ետ ետ քալելով կը ձևացնէ պարուրաձև մը որ երթալով կընեղնայ. բոյնը կը ձևանայ, բայց դեռ շէնքը չէ. պէտք է ձագարէն դուրս հանել մէջը դիզուած հողը: Այս համար միջմառիւնը ամէն մէկ քայլին կանկ կ'առնէ՝ աւազը իր զրուխը բեռնաւորելու համար, զորն որ առջևի թաթերէն մէկովը կ'ընէ. գլխին վրայ բեռնաւորելէն ետեւ մէկ ցատքելով մը բոլորակէն դուրս կը ձգէ բեռը. բայց այս գործքս մեծ յաջողութիւն կ'ուզէ: Այս որովհետեւ այս բանը պարունակաձևին ամէն մէկ դարձուածքին վրայ ալ պիտի կրկնուի՝ թաթերը փոփոխակի կը ծառայեցնէ այս աշխատանքին:

Ս'ինչև հոս միջմառիւն ճարտարութիւնը քանի մը միջատներուն ունեցածէն աւելի չէ. բայց պարագայ մ'ալ կայ՝ որ այս կենդանոյս բոլոր ճարտարութիւնը կը յայտնէ ու զինքը ճարպիկ

1 Երես 152:

2 Թէպէ՛կ պէ՛տէ՛ի:


1 Գոռնա:

կենդանեաց կարգը կ'անցնէ : Արեւմտեան աշխատութեան ատեն այնպիսի խիճի մը կը հանդիպի , որ չի կրնար գլխովը վեր նետել . չի յուսահատիր , հապա գլուխը աւազէն դուրս հանած՝ կը ջանայ ծանրութիւնը կռնակին վրայ առնելու . մարմնոյն ծայրը քարին տակ կը կ'երկնցնէ և այնպէս կը շարժի՝ որ այն բեռը թիկանցը մէջ տեղը սահեցնէ . ետքը այնպէս հաւասարակշիւ բռնած պէտք է որ վեր ելլայ գրեթէ ուղղահայեաց բարձրութենէ մը : Արաւ դժուարին աշխատանք , վասն զի երբեմն աջակողմէն երբեմն ձախակողմէն բեռը իյնալու վտանգի մէջ է , ամէն մէկ ճօճմունք կրնան արգելք ըլլալ , և շատ անգամ երկայն ջանքէն ետեւ քարը կը սահի՝ բայց ինքը միտքը դրածը չի փոխեր . որչափ որ բաղդը զինքը փորձէ , ինքն ալ իւր ճարտարութիւնը ՚ի գործ դնելէն չի դադրիր մինչև որ քարը բոյնէն հեռացնէ :

Աշխատութիւնը ու համբերութիւնը կը յաղթանակեն . ձագարը ամբողջ կը ձևանայ . հիմայ մըջմնառիւծին ուրիշ բան չի մնար ընելիք բայց եթէ իրեն պիտոյքը հոգալ : Արդ անշարժ իր բոյնին խորը կեցած որսին կը սպասէ . երբեմն պէտք կ'ըլլայ երկայն ատեն անօթի մնալ , մինչև որ աւարող մըրջիւն մը կամ մոլորեալ նեպուկ մը դան ու բոյնին բերնին քով թափառին . հազիւ թէ ոտուրնին հոն դնեն մէկէն բռնորած պատը կը փլէի , դժբաղդ ճանապարհորդը պարապ տեղ կը ջանայ նորէն հաստատուն երկրի վրայ կոխել : Արջմնառիւծը վրան աւազէ կարկուտներ կը թափէ , կը յաղթէ անոր ու իրեն աւար կ'ընէ , և իրեն հարկաւոր կերակուրը հանելէն ետքը , չորցած սատակը խոտորնակի կռնակը առած բոյնէն հեռու կը նետէ :

Այսպէս կ'անցնի մըջմնառիւծին երկտասարդութիւնը : Արբոր կը հասնի ծերութիւնը՝ որ է իր վերջի փոփոխութեան ատենը , ալ կերակրոյ համար չաշխատիր . վասն զի ալ այն դանդաղ միջատն չէ՝ որ գետնին վրայ կը

սողար . հապա իր խոշոր մորթը ձգելով՝ ազատ և երազաշարժ ջրաճանձ մը կը դառնայ՝ որ ծիծառն պէս ջրերուն երեսը ժիր ժիր թռչելով կ'որսայ . ու շատ չուշանար իր հաւկիթները աւազին մէջ ձգելու . անով իր կենաց ճակատագիրն ալ կը կատարուի :



Հողային ու ծառային ժողովուրդ :

ՎԻՆՈՒԱԾ է որ այրեցած գօտւոյն տակը եղած ժողովուրդներէն ոմանք անյագ փափաք մը ունին հող ուտելու . մանաւանդ տեսակ մը պարարտ կաւ որ սուր հոտ ալ ունի : Այս մասնաւոր ախորժակը ունեցողները կը գտնուին ՚ի նոր Ալեգոնիա , Ղաւա կղզին , Ալիսէայի ու Փէրուի մէջ , բայց գլխաւորապէս Վերիկա շատ կը գտնուին : Հումպոլդ մեծ երկրագրին ալ աս բանիս վրայօք տուած մանրամասն ու ճիշդ տեղեկութիւնները ալ տարակոյս չեն թողուր : Վերնէն աւելի աս զարմանալի ախորժակը ունեցող ժողովուրդն է ()դ. դոմաք ըսուածը որ ()րէնոք գետին եզերքը կը բնակին : Վանի որ գետին ջրերը ցած են՝ ձկնեղէնով ու կրիայով կը կերակրին . բայց երբոր ջրերը տարեկան յորդութեամբ կը բարձրանան՝ և ալ որս չըլլար , ()դ. դոմաք կը սկսին այն պարարտ ու իւղային հողը ուտել , որ բրտի կաւի կը նմանի՝ երկրի ժանգի գունով : Վսիկայ կը զանգեն նկանակի պէս ու մաղմաղ կրակով կ'եփեն , և ետքը իրենց հիւղերուն մէջ կը դիզեն . և երբոր կ'ուզեն ուտել՝ նախ կը թրջեն . սովորական չափով , կ'ըսէ Հումպոլդ , մէկ հոգի օրը լիպրէ մը հողին չորսին իրեքը կամ հինգին չորսը կ'ուտէ : Այն հոգ ունին աս կերած հողին ընտրութեանը վրայ , վասն զի շատ համուկ կու գայ իրենց . անոր համար նոյն իսկ ցամաքութեան ատենն ալ թէպէտ և ձկանց առատութիւն ունենան՝ ամէն օր կերակրի վրայէն կ'ու-